

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՁՈՐ ՉԱՐՈՒԹԻՒՆԸ

Երզիչն երբ ղրկւում է ձայնից, աշխատում է օպերային քննադատ դառնալ, դերասանն երբ ապացուցանում է իւր բեմական անշնորհքութիւնը, վաչում է խմբագրատներ և շտապում թատրոնական քննադատի տոմսակ ձեռք բերել:

Այս պատահում է և շատ յաճախ: Աստուած փրկի ու ազատի անաջող երգչի կամ դերասանի քննադատական արշաւանքից: Ոչ ոք այնքան խստապահանջ ու անողոր չի, որքան նա: Գոհացում առլ նրա «գեղարուեստական ճաշակին» դժուար, ի՞նչ ենք ասում, միանգամայն անկարելի է: Այն գիտակցութիւնը, որ ինքն էլ երբեմն եղել է երգիչ կամ դերասան և ճակատագրի անգութ վճռով դուրս է շարուել գեղարուեստի տաճարից, հանգստութիւն չի տալիս նրան իւր նախկին տրուեստակիցների նկատմամբ, զգալով, որ նրանք հէնց սկզբից և եթ թագուն արհամարհել են իրան: Իւր սրտի բոլոր թոյնը, սև նախանձից առաջացած չարութեան բոլոր գարշ հեղուկը թափում է իւր արուեստակիցների գլխին:

Գրականութիւնն էլ ունի անախողութիւնից առաջացած և սև նախանձի գերի լքննադատներ, այն տարբերութեամբ սակայն, որ գեղեցիկ գրականութեան տաճարից վնդուած լքննադատը աւելի նեղսիրտ է, աւելի նեղմիտ, աւելի է տանջւում սեպհական անախողութիւնից, հետեաբար ե՛ւ աւելի ողորմելի: Նա չի ամաչում եղելութիւնն աղաւաղել, ստել և ջրպարտել նրանց, որոնց շրջանից ինքը բաղդի վճռով դուրս է շարուել: Նախանձը կուրացրել է նրա մտաւոր աքերը, անչոր չարութիւնը խաւարով պատել է նրա - ուղեղը: Եւ որքա՜ն է տանջւում ողորմելին սեպհական ապիկարութիւնից: Նա գիշերը քուն չունի, գերեկը հանգիստ, ապա ինչպէս գէթ մի

բանի վայրկեան չը դովացնի իւր պրոուդ սիրտը թէկուզ ամեն նազըռելի միջոցներով: Ինչ փոյթ, որ վայրկեանն անցնելու է, նորից սկսուելու է անձարի հոգեկան տանջանքը. դոնէ առ ժամանակ նա հանգստանում է իւր սրտի դառն թոյնից:

Մշակ լրագրի աշխատակից պ. Լէօն մի ժամանակ ձգտում էր մանել գեղեցիկ գրականութեան տաճարը: Այս նպատակով մարդը ամենայն եռանդով տասնեակ տարիներ շարադրեց ինչ որ անդոյն անհամ պատկերներն, վէպիկներն, պատմութեան, նոյն իսկ համարձակութիւն ունեցաւ վէպեր գրելու: Տարիներն անդան տարիներին վրայով, մարդը մնաց անծանօթ ու անկոչ հիւր հայ վիպասանութեան համար: Եղան մարդիկ, որ, իհարկէ, կարդացին այդ շարադրութիւնները, որովհետեւ մեղանում ինչ տպագրութեան բան ասես, որ չի կարդացուի: Բայց կարդացին ներողամտաբար, անխուսափելի ձանձրոյթով, օրօշտալով: Նոյն իսկ այն ընթերցողները, որոնք կուսակցական կոյր միամտութիւնից շարժուած, կը փափաղէին իր բանց կուսակցից հեղինակի մէջ դանել ձիրքի նշոյլ. վերաբերուեցին նրան հաշիւ թաղցրած հեգնանքով, համբերեցին նրա յաւակնութիւնը վիպասան դառնալու: Նոյն իսկ Մշակ լրագրի չը կարողացաւ իւր լաղմաշարժար աշխատակցի մէջ վիպասանի որեւէ ընդունակութիւն գտնելու, թէն մի կոմիկ բժիշկ պոյ լրագրի էջերում նրան միանգամ տաղանդ համարեց: Վերջապէս, անաղղ վիպագրողին անկեղծ բարեկամները կամենալով բանալ նրա աչքերը, հաղիւ իրանց հեգնական ժպիտը թագցնելով, խորհուրդ տուեցին պ. Լէօնի թողնել վիպասանութիւնը և ընտրել իւր փափաք ընդունակութիւններին համապատասխան որեւէ ճիւղ գրականութեան:

Մեծ խելք հարկաւոր չէր պոյ բարի խորհրդի իմաստն ըմբռնելու համար: Բարեկամներն պոյ դէպքում անաղղ վիպագրողին համար կատարեցին հարապատճնողների դեր, ծնողներ, որոնք իրանց ուսման անընդունակ որդուն հանում են դպրոցից և տալիս կոշկակարի աշակերտ: Անշնորհք վիպասանը դարձաւ հասարակ, բայց վերին աստիճանի աշխատասէր լրագրական մշակ: Նա սկսեց թիւել հրապարակախօսական յօդուածներ: Բայց չէ՞ որ հրապարակախօս էլ պիտի ունենայ որոշ չափի բնական ձիրք: Այդ ձիրքը չունէր խեղճը, ուստի պոստեղ ևս անաղղութեան հանդիպեց: Այնուհետեւ նա մտաւ արեւիկներ, թաղուեց հին գրքերի, ու լրագրիների փոշու մէջ:

Նա դարձաւ լպատմաբօս և կենսագրող: Եւ ճշա նա սկսեց արտագրել Տին գրքերից և լրագրներից երկար ու բարակ յօդուածներ և ծախել ընթերցողներին իբրև գրականական գոհարներ (իմա՝ промышленная литература):

Այս, ի հարկէ, պարսաւելի չէ: Պ. Լէօն ունի մեծ աշխատասիրութիւն ու եռանդ, գրելու անսահման սէր — այս էլ մի բան է: Հանելով մեր աղքատիկ պատմութեան արխիւից զանազան հետաքրքրական նիւթեր, կարող է որոշ չափով ծառայութիւն մատուցանել իւր ընթերցողներին: Այս տեսակէտից նրա գործունէութիւնը մենք գնահատում ենք, պայմանով սակայն, որ նա իւր ընթերցողներին ազատիւր տափակ դատողութիւններից: Այո, այս մէկ բարիքը թող նա անի իւր խեղճ ընթերցողներին: Աշխատասիրութիւնն ինքն ըստ ինքեան կէս ընդունակութիւն է. պ. Լէօն լինելով եպան չափ աշխատող, մասամբ լրացնում է բնական ձիրքի պակասը: Բայց թող նա անի այնչափ, որչափ վիճակուած է անձիրք աշխատասիրութեան, այդ մենք էլ կգովենք:

Սակայն ոչ. դուրս վնդուելով գեղեցիկ գրականութեան սեամից, պ. Լէօն իւր նեղ սրտում պահել է հայի վատագոյն գգադումը — սև նախանձը: Նա չի կարողանում մոռանալ իւր անաջողութիւնը և ճշա պիտի իւր անզօր չարութեան թոյնը թափում: Է ուստի այս վիպասանութեան վերայ, նորերս պատահաբար մեր ձեռքն ընկան Աննետի «Բազմալէպ» անունով անվէպ ամսագրի վերջին համարները, ուր տպւում են պ. Լէօնի «Ուստի այս վիպագրութիւն» երկար ու տաղտկալի յօդուածները: Աչքի անցկացնելով այդ յօդուածների մի մասը (ո՛վ ախորժակ ունի բոլորը կարդալու), մե՛ք հանդիպեցինք անզօր չարութեան և սև նախանձի այնպիսի մի օրինակի, որը բարեբաղդաբար միայն վատ հոգին կարող է տալ: Քննադատի դիմակի տակ պ. Լէօն սկսել է մի ամբողջ արշաւանք ուստի այս վիպասանների դէմ: Եւ ի՞նչ արշաւանք: Բոլորին նա ոչնչացնում է ու ջնջում աշխարհի երեսից, բոլորին և մանաւանդ նրանց, որոնց անունները զրկել են խեղճին բնից ու հանգստութիւնից: Վէպեր են պարսաւուած, որոնց իդէան ըմբռնելու ընդունակութիւնն անգամ չունի պ. Լէօն: Անձինք են «քննադատուած», որոնց արհամարհանքի բարձրութեանն անգամ չի կարող հասնել նա: Եւ այս բոլորը միայն այն յուսով, որ անաջող գրչակի պրոլոգ սիրտը գէթ մի բանի վայրկեան հանգստացնի սև նա-

խանձից և անզօր չարութեան ճնշումից:

Մենք, ի հարկէ, պ. Լէօի դէմ բարկանալու ախորժակ չունինք: Եւ ո՞ր խելքը գլխին մարդը կարող է բարկանալ նրա դէմ: Գրականական Սարակնվիւններ ամեն տեղ կան, թող լինի մէկն էլ մեր մէջ: Ամբողջ ռուս գրականութիւնը անզօր է Բուրենինների դէմ: Ո՞ր փիղը կարող է կապել քոթոթների բելաւնը: Հետեւաբար ուշագրութիւն դարձնել պ. Լէօի չարամիտ արշաւանքի վրայ, մենք անկարող ենք: Մենք, ընդհակառակը, փափագում ենք, որ պարոնը շարունակի աղաւաղել մեր լաւագոյն հեղինակների լաւագոյն գրուածներն այնպէս, ինչպէս աղաւաղում է պոփմ: Մենք բարի ենք, գիտենք, որ պոփ արշաւանքը զոնէ ժամանակաւոր հանգստութիւն է տալիս նրա պրոբլոգ ու տապալկոնոգ սրտին և սպասում ենք, որ նա վայելի պոփ հանգստութիւնը: Սակայն հաւատացնում ենք պ. Լէօին, ոչ որ ռուսահայ վիպասաններից մեղաւոր չէ, որ նա ինքը իբրեւ վիպագրող գլորուել է անդունդը: Մենք հաւատացած ենք, ընդհակառակը, որ եթէ հնար լինէր, իւրաքանչիւրը պատրաստ էր նրան խորխորատից հանելու և մտցնելու գեղեցիկ գրականութեան տաճարը, որի դէմ այնքան անզօր չարութիւն է տածում իւր սրտում:

ՍՈՅԼ

ՀԱՅՀՈՅԵԼՈՒ ՄԵՆԱՋՆՈՐՀ

Ամեն բան իւր չափն ու սահմանն ունի բացի «Մշակ» լրագրի անզօր չարութիւնից: Գրականական տապալկոնութիւնների օրգանը տարին տասներկու ամիս գործ է ածում մեր դէմ այն միակ զէնքը, որ յատուկ է իրան—ստուութիւն և զրպարտութիւն, որպէս զի մի կերպ կարողանայ մեզ արատաւորել: Զը զիտենք ի՞նչ ենք արել այդ թերթին, որ կտրել ենք նրա քունը, զրկել հանգստութիւնից: Մեղաւոր ենք միթէ մենք, որ հայ հասարակութեան մտածող մասը այսօր զգուանքով է արտասանում մի թերթի անունը, որը ոչ մի ջանք չի խնայում ինքն իրան բարոյական անդունդը գլորելու և վերջապէս... գլորեց:

Իւր այս տարուայ 11-դ համարում զգուանքի աւաւակայ դարձած թերթը դարձեալ մի կոյտ ցելի է չալրտում շատերի հետ և՛ մեզ վրայ: Իս «Մամուլ» վերնագրով մի յօդուած է: